ՆԱԻԹԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ

ՖՐԻԴՈՆ ՄԱՐԴԱՆԵԱՆԻ

V

Մեր ներկայ նամակը մտադիր ենք նուիրել կերոսինի արտասահմանեան առևտուրի համառօտ տեսութեանը և ամերիկական Standard oil Company կոչած ընկերութեան կազմակերպութեանը։ Լիալոյս ենք որ մեր հաղորդած տեղեկութիւնները շատերի համար հետաքրքրական կըլինեն, որովհետև մենք համոզած ենք, որ մեր կերուբինագործատէրերի ստուար մասը այդ մասին համարեա թէ ոչինչ չգիտէ.

Թէ ինչ գներով են վաճառւում մեր և ամերիկացոց կերոսինը Անգլիայում, Ամստերդամում, Անտուերպէնում, Համբուրգում և Հէնուէում, այդ մասին մենք միշտ տեղեկութիւններ կարող ենք գտնել „Вѣстникъ Финансовъ“ շաբաթաթերթում. իսկ ինչ վերաբերում է մնացեալ տեղերի վաճառքների գներին, այդ մասին մենք կարող ենք իմանալ միմիայն մասնաւոր վաճառքներից։

Այսպէս, մանուֆակտուրայի և արդիւնաբերութեան դեպարտամենտին մեր արտահանողների տուած տեղեկութիւններից երևում է, որ Եգիպտոսի և Տաճկաստանի վաճառքներից franco Բաթում ստացած գները համարեա թէ ոչնչով չեն զանազանւում Լոնդոնի, Անտուերպէնի և Ամստերդամի վաճառքներից ստացածից։ Երիպտոսում և Տաճկաստանում կերոսինի գինը նոյնպէս ընկած է, ինչպէս եւրոպական վաճառանոցներում։ Վերջին ժամանակներս այն տեղերում կատարած վաճառքներից ստացած է իւրաքանչիւր փութի համար franco Բաթում 16,2 կոպ., մինչդեռ միմիայն ֆրախտ Բաքվից մինչև Բաթում տրւում է 19 կոպէկ։ Իսկ Հնդկաստանում և հեռու արևելքում կատարած վաճառքներից ստացած է franco Բաթում 18,9 կոպ., ուրեմն քիչ աւել վեր յիշած տեղերի վաճառքներից։ Բայց չպէտք է մոռանալ, որ այստեղ ևս մեր և ամերիկացիների մէջ սկս-

մել է արդէն կատաղի մրցումն և շատ կարճ ժամանակամիջոցում հաւանական է որ այնտեղի վաճառքներից ստացածը պակասի։

Գների այդ միանմանութիւնը շատ բնական է. նախ որ երկու կողմից էլ բաւականաչափ քանակութեան կերոսին է արտահանւում, և երկրորդ՝ երկու կողմն էլ միջոց ունեն ուր և երբ կամենան արտահանել կերոսին, չնորհիւ ճանապարհների կանոնաւոր հաղորդակցութեան։ Այնպէս որ եթէ մի որ և է վաճառանոցի վաճառքը արդիւնաւէտ է, երկու կողմն էլ կարելոյն չափ աշխատում են օգտուել այդ վաճառքներից։ Բնականապէս [illegible]ում է մրցումն, որի անխուսափելի հետևանքն է գների անկումն և հետևապէս ստացած արդիւնքի այն աստիճանի պակասելը, որ հաւասարւում կամ միանմանւում է մնացեալ վաճառանոցներից ստացած արդիւնքին։ Բացառութիւն այդ դէպքում կարող են կազմել այն վաճառանոցները որտեղ կառավարութեան կողմից արհեստական կերպով արգելքներ կը դնեն։ Օրինակի համար, Իտալիան և Չինաստանը կամենում էին սահմանել նաւթային իւղերի մոնոպոլիա (մենավաճառութիւն) և կամ որոշել այն վաճառանոցները, որոնք մրցող կողմերից մէկը նոր պահեստներ կառուցանելու հնարաւորութիւն չունի։

Անգլիայի և հիւսիս-արևմտեան վաճառանոցներում գները այն աստիճանի ընկած են և վնասաբեր, որ եթէ այսուհետև ևս չարունակեն դէպի այն կողմերը կերոսին արտահանել այդ կը նշանակէ որ նոքա ստիպուած են այդ անել պայմանագրի զօրութեամբ, և կամ թէ ունին արած այնպիսի ծախսեր, որ հնարաւորութիւն չկայ գործերը վերջացնելու։ Բայց և այնպէս վերջերումս նկատւում է որ դէպի այդ վաճառանոցները արտահանածի քանակութիւնը աւելի և աւելի պակասել է։

Ներկայումս Անգլիայի այն բանկերը, որոնք կերոսինի ապահովութեամբ փող ունին տուած Բաքուայ Ստանդարտին, այդ կերոսինի իւրաքանչիւր գալոնը առաջարկում են առնողներին $3^7/_{16}$ պէնսով, որը մեր հաշուով անում է մօտաւորապէս 13 կոպէկ իւրաքանչիւր փութի համար franco Բաթում։

Երկաթուղային գործերի դեպարտամէնտում կազմած ցուցակից երևում է, որ անցեալ ապրիլից դէս Լոնդոնում, Ամստերդամում և Հէնէում կատարուած վաճառքներից իւրաքանչիւր փութի համար ստացածը franco Բաթում հաւասարւում է զէրօի, մինչդեռ Բաքուայ կերոսինագործատէրերին կերոսինի փութը դեռ բարեչաջող հանգամանքներում նըստում է $7,_5$ կոպէկ։

Անցեալ ամառը կառավարութեան կարգադրութեամբ Եւրոպա էր ուղարկուած, կերոսինի առևտուրը այնտեղ ուսումնասիրելու նպատակով,

ինժեներ-տեխնոլոգ պր. Գուլիշամբարովը։ Այդ պարոնը Եւրոպայից վերադառնալուց յետոյ մի զեկուցում արեց մանուֆակտուրայի և արդիւնաբերութեան դեպարտամէնտում իւր ստացած տպաւորութիւնների և նոցա ուսումնասիրութեան մասին։ Մենք աւելորդ չենք համարում այդ զեկուցումից մի քանի տեղեկութիւններ քաղուածօրէն առաջ բերել։

Գերմանիայի հիւսիսային նաւահանգիստներում ռուսաց կերոսինի առևտուրը վերին աստիճանի ընկած է, չնայելով որ այդ տեղերը արժանի են աւելի լուրջ ուշադրութեան, որպէս մեծ վաճառականոցներ։ Գեղջկոնոնիայում գործածւող կերոսինի քանակութիւնը մեծ է և միայն ամերիկականն է. ռուսաց կերոսինագործատէրերը մեծ ջանք են դրել այնտեղի առևտուրը կանոնաւորելու համար, սակայն այդ ջանքը ոչնչով չպսակուեց, այլ ընդհակառակը կատարելապէս ընկճուեց հզօր ամերիկական Standard Oil Company ընկերութեան առաջ։

Ռուսաց կերոսինը Գերմանիա տանում է երկու ճանապարհով. ա) Աստրախան, Ցարիցին, Լիբաւա, Շտետին և Լիւբէկ, բ) Բաթում, Անտերպէն, Բրէմէն և Համբուրգ։

Գերմանիայի փչեալ կենտրոններից զանազան կէտերով կերոսինը տեղափոխում են դէպի երկրի խորքերը։ Այդպէս՝ Լիւբէկից մինչև Բերլին և աւելի հեռու, իսկ Համբուրգից Էլբա, Վեզէր և Հռենոս գետերի կետերով անցնում են մինչև անգամ Մանհէյմից հեռու։ Լիբաւայով տեղափոխում է գլխաւորապէս Նոբէլ ընկերութիւնը, իսկ Բաթումով—Նոբէլ, Ռոտշիլդ, Բագաչ Ստանդարտ, Կասպեան ընկերութիւնը և մի քանի ուրիշները։ Մեր վաճառականները բոլորն էլ, առանց բացառութեան, արտասահմանեան վաճառքներից վնաս են կրում։ Այդ հանգամանքը պր. Գուլիշամբարովը ևս բացատրում է նրանով, որ ամերիկացիք գործում են միմիայն Standard Oil Company ընկերութեան անունով, իսկ մերոնք բաժան-բաժան։ Դրա չնորհիւ մեր բոլոր ձեռնարկութիւնները օրհասական դրութեան մէջ են գտնւում։ Գերմանիայում մեր առևտրի այդ աստիճանի անկումը առաջացել է երկու պատճառներից. ա) ամերիկացիների ընդդէմ մեզ խելացի և եռանդուն գործունէութիւնից և բ) գերմանացիների թշնամաբար վերաբերուելուց դէպի մեր կերոսինը։ Այդ վերջին հանգամանքը առաջացել է դարձեալ չնորհիւ ամերիկացիների, որոնք կարողացել են գերմանացիներին արդէն համոզել, թէ մեր կերոսինը վատ է այրւում, այսինքն լոյսը մռայլ է։ Բացի դրանից Գերմանիայում մաքսային տուրքը վերցնում են ի նկատի առնելով կերոսինի տեսակարար կշիռը, բայց որովհետև մեր կերոսինի տեսակարար կշիռը աւելի ծանր է, ուստի ընդհանուր հաշիւով մենք ամերիկացիներից 3 % աւել մաքս ենք վճարում։ Այդպէս Գերմանիայի առևտրի բոլոր պայմանները խօսում են օգուտ ամերիկացիների. հետևապէս մոռանել մրցման մասին— կը նշանակէ ցնորքներով զբաղուել։

Անտուերպէնը, որպէս նաւահանգիստ, շատ առաւելութիւններ ունի Բելգիայի, Հոլլանդիայի և Գերմանիայի մնացեալ նաւահանգստներից։ Բելգիան, չնորհիւ ակցիզի բացակայութեան, նաւթարդիւնքներ բերելը շատ հեշտութիւններ ունի, ուստի մեր վաճառականները այստեղն են ընտրել որպէս կենտրոն՝ Հռենոսի շրջակայքում մեր կերոսինը վաճառելու համար։ Հէնց այդ իսկ պատճառով Անտուերպէն բերած մեր կերոսինի քանակութիւնը հետզհետէ աւելանում է։

Այդ դէս 1890	թուականին	բերուած է 185,000	բարել [1]։
1891	»	263,800	»
1892	»	272,000	»
1893	»	287,000	»

Սակայն, չնայելով այդ բոլորին, մեր առևտուրը Անտուերպենում աւելի ընկած է քան Գերմանիայի հիւսիսային նաւահանգիստներում։

Այստեղ մեր առևտուրը սկսել է Նոբել ընկերութիւնը, իսկ վերջերումս աւելացել է նաև Կասպեան-Սև-ծովեան ընկ. (Ռոտշիլդ) և Բագաւ Ստանդարտը։ Նոբել ընկերութիւնը, այնտեղացի հարուստ վաճառական Ռիտի հետ միանալով, կառուցել է այնտեղ կերոսինի համար մեծ պահեստներ, որտեղից գետային չոգենաւերով կերոսինը տեղափոխում են դէպի գանազան կողմեր, գլխաւորապէս դէպի Հռենոսի շրջակայքում գտնուող քաղաքները։ Նախ կերոսինը Շելդա գետով է ուղարկւում, ապա Հռենոսով և հասնում մինչև Մանհէյմ քաղաքը, որտեղ թէ մեր և թէ ամերիկացի վաճառականներըմեծ պահեստներ ունին կառուցած։ Մի քիչ ժամանակ սրանից առաջ Մանհէյմը Հռենոսի վրայ ամենահեռաւոր քաղաքն էր հաշւում, ուր կերոսինը նաւերով կարելի էր հասցնել։ Իսկ այժմ տանւում է մինչև Սարասբուրգ և, չնորհիւ մի քանի ջրանցքների, հասցնւում է նոյն իսկ մինչև Բազել (Շեէյցարիայում), ուր արդէն հանդիպում է Հէնէէով և Սէն-Գոթարդի տոնէլով բերուած կերոսինի հետ։ Ուրեմն Բազէլը այն վերջին կենտրոնն է, ուր Հռենոս գետով կարելի է տանել կերոսինը։ Այդ ահագին տարածութեան վրայ Անտուերպէնից մինչև Բազել, Ռիտը և Նոբել ընկերութիւն մի կողմից և Ռոտշիլդը միւս կողմից կառուցել են բազմաթիւ պահեստներ։

Մեծ Բրիտանիայում (Անգլիա) կերոսինի վաճառքը կատարւում է գալոնի հաշւով, որը հաւասար է 0,229 փութի։ վաճառւող կերոսինի տեսակարար կշիռը անպատճառ պիտի լինի 0,825։ Պր. Գուլիշամբարովի առաջ բերած տեղեկութիւններից երևում է, որ ամերիկացոց կերոսինի պահանջը հետզհետէ աւելանում է, իսկ մերինը պակասում։

---

[1]) Բարել հաւասար է 9,5 փութի։

Այդպէս 1891 թ. մենք տարել ենք		46,835,000	գալոն։
1892 » » »		38,211,000	»
Իսկ ամերիկացիք 1891 թ. »		82,035,000	»
» 1892 թ. »		89,994,000	»

Ամբողջ 1892 թ. ընթացքում Մեծ Բրիտանիա կերոսին բերուած է 22 նաւահանգիստների միջով, որոնցից մեր վաճառականները միմիայն եօթից կարողացել են օգուտ։ Standard oil Company գլխաւոր նպատակներից մէկը Անգլիայում, ինչպէս և ուրիշ երկիրներում, եղել է կարելուն չափ հեռացնել միջնորդների ազդեցութիւնը վաճառքների վրայ, որոնք իրանց միջնորդութեան համար ստանում են 1% կերոսինի գնից։ Իւր նպատակին հասնելու համար Ստանդարտը միաժամանակ մեծաքանակ առևտրի հետ սկսել է նաև փոքրաքանակ առևտուրը՝ ընդունելով պատուէրներ ամենամեծ քանակութիւնից սկսած մինչև ամենաչնչին։ Եւրոպայի բոլոր մեծ քաղաքներում Ստանդարտը ունի վագոնէտներ (փոքրիկ վագոններ), որոնց մէջ կերոսինը հասցնում է քաղաքի բոլոր թաղերի բնակիչներին։ Արդ մի այդպիսի կարմարութիւն տալով իւր առնողներին, պարզ է, որ միշտ նորա կլիենտների թիւը օրըստօրէ կըբազմանայ։ Շնորհիւ այդ ձեռնարկութեան «Ստանդարտի» գործակալները միշտ կարողացել են իրանց կերոսինը աւելի ձեռնտու գներով վաճառել և ստանալ մեծամեծ օգուտներ, մինչդեռ մեր վաճառականները ոչ թէ կարողացել են ապրանքի արժողութիւնը հանել, այլ ընդհակառակը նոքա ստիպուած են եղել իրանց կերոսինը վնասով ծախել։

Անգլիայում մեր կերոսինը վաճառում է գլխաւորապէս Նոբելի, Ռոտշիլդի, Բագու Ստանդարտի և Շիբաևի ձեռքով։ Համերաշխութիւն ասած բանը սրանց մէջ չկայ. ամեն մէկը գործում է իրա համար՝ աշխատելով ուրիշի վարկը ձգել։ Եթէ սրանք ևս կարողանային ամերիկացիների նման համերաշխութեամբ գործել, գուցէ կարողանային մի կերպ չարունակել իրանց գործը։

Մենք մեր նամակներում շատ անգամ լիշած ենք ամերիկական Standard oil Company անունը, սակայն երբէք կանգ չենք առած այդ մեծահռչակ ընկերութեան մասին մի քանի խօսք ասելու։ Այս անգամ մենք մ. զ պարտաւորուած ենք համարում մի քիչ կանգ առնել նաև այդ ընկերութեան մասին։ Այն տեղեկութիւնները, որ այժմ կը հաղորդենք ընթերցողին, մենք քաղում ենք գլխաւորապէս գրքոյկից՝ „Die Monopolisirung des Petroleumhandels und der Petroleumindustrie von E. F. Seemann. Berlin“ 1893։

Standard Oil Company իւր ծագմամբ և գոյութեամբ պարտական է

գլխաւորապէս ամերիկացի մի ոմն Ջոն Ռոկֆելլէր'ին, որը մինչև 1865 թ. Ամերիկայի Օհայօ նահանգի փոքրիկ Կլեվելենդ քաղաքում հասարակ հաշվապահի պաշտօն էր վարում և ունէր ալիւրի փոքրիկ առևտուր։ Այստեղ նա ծանօթացաւ կերոսինագործարաններից մէկում ծառայող մի ոմն Ջոն Անդրէասի հետ, որը հնարել էր աւելի կատարելագործած միջոց նաւթ զտելու համար, և սակայն ոչ ոք կերոսինագործատէրերից հաւատ չէր ընծայում նրան։ Ռոկֆելլերը իւր փոքրիկ կարողութիւնը դրեց Ջոն Անդրէասի տրամադրութեան տակ, որով հիմնեցին կերոսինի մի փոքրիկ գործարան Կլեվելենդում։ Շնորհիւ հիմնադիրների եռանդուն և խելացի գործունէութեան՝ գործարանը տարէց տարի լայնացաւ, ընդարձակեց իւր գործունէութեան սահմանները և հռչակեց Standard Oil Company անունով։

Սակայն Ռոկֆելլերը չէր բաւականանում իւր գործարանի բնական զարգացումով։ Նա ամեն մի յարմար դէպք, որից իւր գործը այսպէս թէ այնպէս կարող էր շահուել, աչքից չէր թողնում։ Նաւթային շրջանին կցած մի քանի մասնաւոր ընաւորութիւն կրող երկաթուղիներում տարիֆները առանց վերստուգութեան էին մնում։ Նա օգտուեց այդ հանգամանքից, պայմանաւորուելով նոցանից մի քանիսի հետ (18 յունուարի 1872 թ.), որ նրա ապրանքի արտահանութեան համար տարիֆից զիջում անեն։ Այդ պայմանագրով շատերը այդ երկաթուղիների վարչութիւնից պարտաւորեցին իւրաքանչիւր տակառ կերոսինի տարիֆից Ռոկֆելլերին պակասցնել 1½ դոլլար։ Հէնց այդ ժամանակին նա արդէն վերջացրել էր իւր երկրորդ գործարանի շինութիւնը Պետերբուրգում։ Իւր այդ տեսակի վճռողական և եռանդուն գործունէութեամբ նա միւս կերոսինագործատէրերին այն աստիճանի քայքայման հասցրեց, որ նոքա՝ անկարող լինելով այլ ևս դիմադրել նրան, ստիպուած էին կամ դադարեցնել իրանց գործերը, կամ Ռոկֆելլերի տրամադրութեան յանձնել։ Իսկ Ռոկֆելլերը, օգտուելով հանգամանքից, ընչին գումարով առնում էր ահագին գործարանները։ Այդպիսով այն 58 գործարաններից, որոնք 1867 թ. հաշուում էին իբր զանազան դրամատէրերի սեպհականութիւն, ինը տարուայ ընթացքում արդէն 29-ը անցել էին Ստանդարտի ձեռքը, իսկ մնացեալ 28 գործարանները հազիւ հազ կարողանում էին պահպանել իրանց թշուառ գոյութիւնը։

Ռոկֆելլերը դորանով ևս չբաւականացաւ։ Նա 1874 թ. սկսեց ձեռք բերել ահագին քանակութեամբ նաւթ փոխադրող մի քանի ընկերութիւնների ակցիաներ և գլխաւորապէս այն ընկերութիւնների, որոնք նաւթը հանքերից փոխադրում էին դէպի երկաթուղային կայարանները։ Նրան շատ կարճ ժամանակամիջոցում յաջողուեց ձեռք բերել Ամերիկայի ամենաշատ նաւթ փոխադրող ընկերութեան ակցիաների մեծ մասը, այն է United pipe line և կարողացաւ երկաթուղային ընկերութիւններում զի-

ջում սահմանել տալ նաև այդ ընկերութեան համար։ Այդպիսով նա նաւթ փոխադրող միւս ընկերութիւններին այն աստիճանի նեղ դրութեան մէջ դրեց, որ նոքա ստիպուեցան ծախել իրանց գործերը United pipe line ընկերութեան, կամ աւելի ճիշդն ասած՝ նոյն Standard oil Company-ին։

Ռոկֆելլերի յաջողութիւնը հանգիստ չէր թողնում ամերիկացի միւս մեծ դրամատէրերին։ Սակայն ահարկու Standard oil Company-ի առաջ ոչինչ չէր դիմանում, ամեն նոր ձեռնարկութիւն խախտւում էր հէնց իւր սկզբում, չնայած իւր դրամագլխի մեծութեան։ Այդպէս խախտուեց Empire Transportation Company, որը կազմուեց 1877 թւականի սկզբներին և տեւեց միմիայն տասը ամիս, այն է մինչև 17-ն հոկտեմբերի նոյն թւականի։ Այդ նոյն պատճառով այն մեծ ընկերութիւնը Tide water pipe line, որը նաւթանցք ունէր դրած Պիտսբուրգից մինչև Ֆիլադելֆիայի երկաթուղու գիծը, մօտ 280 վերստ տարածութիւն, մի տարի և կէս միմիայն կարողացաւ դիմանալ Ստանդարտի առաջ, այն էլ մեծամեծ զնաններ կրելով, բայց և այնպէս ստիպուեց ծախել իւր բոլոր գործերը հէնց նոյն Ռոկֆելլերին։

Զեռք բերելով կերոսինի համարեա թէ բոլոր գործարանները և նաւթանցքերը. պայմանաւորուելով զանազան երկաթուղիների հետ, Ռոկֆելլերը սակայն հարկ չէր գտնում անձամբ նաւթարդիւնաբերութեամբ պարապուել, որը առանց այդ էլ իրանից էր կախուած։

Այդպէս դառնալով Ամերիկայի ամենամեծ և ուժեղ կերոսինագործատէրը, Ռոկֆելլերը մտադրուեց աւելի ընդարձակել իւր գործունէութեան ծրագիրը, նախ կամենալով իւր գործի մէջ ամփոփել մեծ դրամագլուխ և երկրորդ՝ իւր կողմը քաշելով դուրսը մնացած կերոսինագործատէրին։ Այդ նպատակով նա 1882 թ. 2 յունուարին հիմնեց Standard oil Trust ընկերութիւնը, որի մէջ մտաւ նաև հռչակաւոր Standard oil Company։

Որպէս զի մեզ համար պարզի նաւթային Trust-ի (տրուստ) կազմակերպութեան էութիւնը, մենք հարկաւոր ենք համարում մի քանի խօսք ասել նաև Ամերիկայի արդիւնաբերական դաշնակցութիւնների կազմակերպութեան մասին։ Մենք այդ կանենք օգտուելով պր. Բ. Բրանդի յօդուածից „Союзы предпринимателей въ Соединенныхъ штатахъ С. Америки“ (Русская Мысль, Іюнь 1893 г.), որը, ինչպէս ասում է ինքը հեղինակը, կազմած է ամենաստոյգ տեղեկութիւնների հիման վրայ։

Ամերիկայի Միացեալ Նահանգներում նախաձեռնող դաշնակցութիւնները, չնորհիւ այդ երկրում տիրող իրաւական առանձին պայմանների, մի առանձին ձև են ստացել։ Trustees ասելով Անգլիայի հին օրէնքների մէջ հասկացւում է մի անհատ, որին յանձնւում է ի պահեստ (in trust) կամ կառավարելու համար մի կալք՝ նշանակուած յօգուտ երրորդ անձնաւորութեան։ Այդ ինստիտուտը սկզբում իւր գլխաւոր գործադրութիւնը գտ-

նում էր Անգլիայի ընտանեկան և ժառանգական օրէնքներում, իսկ լետու նորա գործադրութեան ծաւալն ընդարձակեց այն աստիճանի, որ նոյն իսկ սկսեցին գործադրել և դաշնակցութիւնների վերաբերեալ օրէնքների մէջ, որ և գլխաւորապէս նպաստեց հզօր և բազմատեսակ սինդիկատներ կազմելուն։

Սկզբում մի քանի արդիւնաբերական ընկերութիւնների և մասնաւոր ձեռնարկութիւնների ներկայացուցիչները փորձեցին միութիւն ստեղծել իրանց գործավարութեան մէջ, ընտրելով իրանց միջից կոմիտէ, որին և յանձնւում էր գործի ամբողջ ղեկը։ Կոմիտէը պարտաւոր էր հսկել դաշնակցութեան գործավարների գործունէութեանը, որպէս զի նոքա բարեխղճ կերպով կատարեն իրանց վրայ առած պարտականութիւնները, գիտել գործի և արդիւնաբերութեան ընդհանուր ընթացքը, աշխատել կազմակերպել ապրանքի վաճառումը և առ հասարակ որոնել միջոցներ, որպէս զի գործը աւելի բարեյաջող հանգամանքների մէջ դնի։ Սակայն փորձը շատ կարճ ժամանակամիջոցում պարզեց, որ դաշնակցութիւնների գործունէութեանը մի այդպիսի եղանակ տալը շատ սահմանափակ է և ունի բազմաթիւ անյարմարութիւններ։ Նախ՝ դաշնակցութեան անդամներին ոչինչ չէր արգելում խանգարել կամ չկատարել այս ինչ կամ այն ինչ իրանց վրայ առած պարտականութիւնը, և երկրորդ՝ երբ ցանկանային՝ կարող էին թողնել դաշնակցութիւնը և հեռանալ առանց որ և է պատասխանատուութեան։ Այդ տեսակի դաշնակցութիւնները միշտ կարճատև են եղել, հազիւ մի տարի կարողացել են քաշքշել իրանց կեանքը։ Իրերի այս դրութեան ժամանակ, շատ բնական է, որ պէտք էր ընտրել այնպիսի միջոցներ, որոնցով կարելի լինէր հաւասարաչափ պաշտպանել բոլոր անդամների շահերը, որպէս զի դաշնակցութեանը վստահ կերպով կարողանային մասնակցել նաև նոյն տեսակի արդիւնաբերող մեծ ընկերութիւններ, որպէս առանձին անդամ և ընդունէին մի ընդհանուր օրէնք։ Ահա թէ ժամանակի ընթացքում ինչ տեսակ պայմանների անհրաժեշտ կարեւորութիւն զգացւեց։ 1) Շահի ընդհանրութիւնը և նրա հաւասար բաժանումը, որոնք օղակի պէս կը կապեն բոլոր անդամներին, 2) բոլոր կորպորացիաները, առանց բացառութեան, պարտաւոր են ընդունել մի ընդհանուր մարմնի հեղինակութիւնը, որի մէջ կենտրոնացած պէտք է լինի թէ իւրաքանչիւր կորպորացիայի գործավարութեան և թէ ընդհանրապէս ամբողջ դաշնակցութեան ղեկը և 3) կորպորացիաներից ոչ մէկը միջոց չպէտք է ունենայ թէ իրա վրայ առած պարտականութիւնները զանցառութեան տալու և թէ դաշնակցութիւնից հեռանալու։ Այդ նպատակներին հասնելու ամենայարմար միջոցն էր trustees-ին այդպիսի մի ձև տալը։ Ահա թէ ինչպէս trustees քաղաքական իրաւունք ստացան Ամերիկայի տնտեսական կեանքում։

Trustees-ի գործը դարձեալ կենտրոնացած է կոմիտէտի ձեռքում (Boord of trustees), որը առհասարակ բաղկացած է լինում 9 կամ 11 անդամներից։ Trustees-ի առանձին յատկանիշը այն է, որ այստեղ կարող են մասնակցել զանազան ակցիոնէրական ընկերութիւնների ակցիատէրեր, որոնք իրանց պատկանեալ ակցիաները յանձնում են ի պահեստ (in trust) ընտրած կոմիտէտին։ Այդ վերջինը, ունենալով իւր ձեռքի տակ զանազան ընկերութիւնների ակցիաների ահագին քանակութիւն, միշտ կարողանում է այս կամ այն ընկերութեան ժողովներում վճռողական դիրք բռնել, և հետևապէս զանազան ընկերութիւնների գործավարութեան ղեկը իւր ձեռքն առնել։ Գործերի ընթացքին մի այդպիսի եղանակ տալու բնական հետևանքն է միապետական գործավարութիւն։ Միւս կողմից, trustees-ին մասնակցողների մէջ ամուր կապ ստեղծելու և շահերի բաժանման մէջ հաւասարութիւն մտցնելու համար, յանձնարար կոմիտէտը ստանալով զանազան ընկերութիւնների ակցիաներ, նրանց փոխանակ տալիս է trustees կողմից վկայագիր (trust certificates)։ Ակցիաների երեսով զանազան ընկերութիւններից ստացած օգուտը կազմում է մի ֆոնդ, որը և բաժանւում է մասնակցողների մէջ հաւասարաչափ կերպով՝ ի նկատի առնելով նրանց տւած վկայագրերի գումարը։ Այդպիսով իւրաքանչիւր վկայագրի տէրը ընդհանուր օգտից ստանում է միևնոյն տոկոսը, չնայելով որ նրան պատկանեալ ակցիաները կարող են և ոչինչ օգուտ տւած չլինել, կամ նոյն իսկ կարող են վնասած լինել։

Դժւար չէ տեսնել, իրերի այդ դրութեան ժամանակ, թէ վկայագրերի տէրերը, առանց բացառութեան, որ աստիճանի հետաքրքրւած կը լինեն, որ աւելի բարեյաջող հանգամանքների մէջ դնեն այն ձեռնարկութիւնները, որոնք աւելի արդիւնաւէտ են, և ընդհակառակը ինչպիսի ջանք են դնում դադարեցնել այն ձեռնարկութիւնների գործունէութիւնը, որոնք արդիւնաւէտ չեն, կամ որոնց տւած արդիւնքը այնքան չնչին է, որ կարելի է անշահաւէտ ձեռնարկութիւն անւանել, առանց նայելու թէ պատկանում են արդեօք այդ ձեռնարկութիւնները իրանց ընկերութեան թէ ուրիշին։

Անհաւասիկ այդ են ամերիկական դաշնակցութիւնների կանոնաւոր կազմակերպութեան գլխաւոր գծերը։ Այդ տեսակի դաշնակցութիւնների ամենաուժեղ և արտայայտիչ ներկայացուցիչն է Standard oil Trust, որը «տրուստի» կազմակերպութիւն ընդունող ակցիոնէրական ընկերութիւններից առաջինն է։

Standard oil Trust իւր խորհրդի համար Ամերիկայի նշանաւոր հարուստներից ընտրեց 9 հոգի ղեկավարներ, ի թիւս որոնց են Ռոկֆելլէր, Զաբլս-Պրատ, Ռոջէրս, Ֆլեգլէր, Տալֆորդ, Բրիւատէր, Օլիւէր-Պէն և ուրիշ դրանց նմանները։ Այդ դաշնակցութեան մասնակցում էին աւելի քան 50

հոգի, որոնցից մի մասը մեծ կերոսինագործ էին, իսկ միւսը զանազան տեսակի ակցիոներական ընկերութիւններ նշանաւոր գումարի ակցիատէրեր, առ հասարակ այնպիսի մարդիկ, որոնք իրանց ընկերութիւններում դիրք և վճռողական ձայն ունէին։ Այդ բոլոր մասնակցողները իրանց պատկանեալ ակցիաները և կալքը յանձնեցին «Տրուստին», փոխանակը ստանալով trust (сертификаты, վկայագիր) 100 դոլլար արժողութեամբ իւրաքանչիւրը։ «Տրուստի» կապիտալը սկզբում հաշւում էին 70 միլիոն դոլլար, քիչ ժամանակում նա հասաւ մինչև 90 միլիոնի, իսկ այժմ հաշւում են 148 մի լիոն դոլլար։ 1883 թ. մինչև 1889 թ. այդ ընկերութեան դիվիդէնդը միջին թւով հաշւում են $11^1/_2$%-ի, բաց առեալ այն 1—$1^1/_2$%, որը դուրս է եկած ընկերութեան ամբողջ օգտից պահեստի դրամագլուխ կազմելու համար։

Ամերիկալի պէս երկրում, այդ ազատութեան աշխարհում, շատ բնական է, որ այդ ընկերութեան միապետական ձգտումները ոչ ոքի դիւր չգային։ Եւ ահա այսօր ամերիկացիք իրանք բացարձակապէս բողոքում են բոլոր դաշնակցութիւնների դէմ, մանաւանդ նաւթային դաշնակցութիւնների դէմ։ Այդ անբաւականութիւնները այն աստիճանի սուր կերպարանք են ստացել, որ Միացեալ նահանգների նոր նախագահ Կլիվելէնդը 4-ին մարտի 1893 թ. իւր արտասանած ճառի մէջ հարկաւոր համարեց ամերիկացիների ուշադրութիւնը դարձնել այդ օրըստօրէ զարգացող միապետական ձգտումների տէր դաշնակցութիւնների վրայ և իւր կողմից խոստանալ ամենաուժեղ և եռանդուն զիմադրութիւն դործ դնել։ Անցեալ սեպտեմբերին, եթէ ընթերցողը յիշում է, լրագիրներում մի լուր տարածուեց՝ իբր թէ Standard oil Trust-ը սնանկ է հրատարակել իրան։ Սակայն այդ լուրը ոչնչով չհաստատուեց։ Փակտը այն է, որ կառավարութիւնը բաց պատերազմ է յայտարարել դաշնակցութիւնների դէմ։ Այժմ դժուար է որոշել թէ դէպի որ կողմը կը մնայ յաղթութիւնը, սակայն չենք կարծում, որ Ռոկֆելլէրը և «Տրուստի» միւս անդամները թոյլ տան մի այդպիսի կազմակերպուած դործի քանդուելը։

Այդպէս դառնալով Ամերիկալի նաւթային առևտուրի կատարեալ տէր, Standard oil Trust իւր ուշադրութիւնը բնականաբար դարձրեց Եւրոպալի վրայ, կերոսինի այդ գլխաւոր դործածողի վրայ։ Եւ այդ նա արաւ իւր ժամանակին, երբ արդէն ռուսաց կերոսինի մրցումն աւելի և աւելի զգալի էր դառնում։ Զկամենալով մենակ ընդարձակել իւր դործը, Standard-ը սկսեց կանոնաւորել կերոսինի առևտուրը Եւրոպայում, կամաց-կամաց գրաւելով այնտեղի դրամատէրերին և կերոսինի մեծ առևտուր ունեցողներին։ Եւ այդ նորան յաջողուեց, այնպէս որ նա շատ կարճ ժամանակամիջոցում կարողացաւ կազմել մի շարք ակցիոնէրական ընկերութիւններ յատկապէս ամերիկական կերոսին վաճառելու համար։

Այդ բոլոր նորակազմ ընկերութիւններին նա մասնակցում է, սակայն այն չափով, որ միշտ իւր կողմն է ձայների մեծամասնութիւնը։ Այդ ընկերութիւններից ամենաառաջինը և աւելի ուշադրութեան արժանին է Deutsch-Amerikanische Petroleum Gesellschaft (գերմանո-ամերիկական նաւթային ընկերութիւն)։ Այդ ընկերութիւնը պաշտօնապէս կազմուած է 25 ին փետրուարի 1890 թ. 9 միլիոն մարկ հիմնադիր դրամագլխով, սակայն որը 1 յունուարի 1893 թ. արդէն հասել էր 20 միլիոն մարկի։ Բացի դրանից նա կազմել է հետեւեալ ընկերութիւնները. Բելգիայում և Շուէդիայում „American Petroleum Company“, Շուէդիայում Նորուեգիայում և Դանիայում „Danski Petroleum Actieselska“, Իտալիայում—„Societa Italo-Americana del Petrolio, Անգլիայում—„Anglo oil Company“։ Միմիայն Ֆրանսիան մինչ վերջերս ազատ էր մնացել «Standard»-ի ազդեցութիւնից, այն էլ շրջրիւ այնտեղի երկաթուղիներում տիրող տարիֆին, որով հում նաւթ Ֆրանսիա բերելը և տեղական գործարաններում զտելով կերոսին պատրաստելը աւելի ձեռնտու է, քան արդէն պատրաստի կերոսին բերելը։ Սակայն, ինչպէս իմանում ենք վերջին տեղեկութիւններից, Ստանդարդը Ռուան քաղաքում արդէն ձեռնարկել է կառուցանել մի այնպիսի կերոսինագործարան, որի արդիւնաբերութիւնը կարող լինի բաւականութիւն տալ ամբողջ Ֆրանսիայի պահանջին։ Ի հարկէ Ստանդարդը ինքը այդ գործարանի համար հարկաւոր քանակութեամբ նաւթ կը բերի, որպէսզի գործարանը անդադար բանի։

Ստանդարդը ունի իւր բոլոր յարմարութիւնները, այնպէս որ որ և է բանում նեղութիւն նա չի զգում։ Ունի բազմաթիւ չոգենաւեր, թէ ովկիանոսում բանեցնելու, թէ ծովերում և թէ գետերում, ունի բազմաթիւ սեպհական վագոններ Եւրոպայի և Ամերիկայի երկաթուղային գծերի վրայ, ունի բազմաթիւ պահեստներ Եւրոպայի կերոսինի առևտրով բոլոր քիչ թէ շատ յայտնի քաղաքներում։ Իսկ այժմ, ինչպէս մենք իմացանք ամենաստուգ աղբիւրներից, Ստանդարդը իւր ուշադրութիւնը արդէն դարձրել է հեռու Արևելքի վրայ, որտեղ 1893 թ. սկսած զանազան պահեստներ և ուրիշ անհրաժեշտ շինութիւններ է կառուցանում։

Հաւասիկ, յարգելի ընթերցող, թէ ինչպիսի կազմակերպուած ուժի դէմ է վիճակուած կռուել մեր նորաբողբոջ դաշնակցութիւնը։ (Նայել ծանօթութեանը յօդուածիս վերջում)։

Մենք այն կարծիքի ենք, որ այսուհետև յաղթութիւնը դարձեալ նոցա կողմը կը մնայ։ Նոքա անհամեմատ ուժեղ են մեզանից։ Մեր կերոսինագործատէրերը աւելի խելացի վարած կը լինէին, եթէ հէնց այժմանից պատգամաւորութիւն ուղարկէին Standard ին համաձայնութիւն կազմելու համաշխարհային վաճառանոցները բաժանելու մասին։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.

Մեր նախորդ նամակում արդէն հաղորդել էինք որ Բաքւի կերոսինագործատէրերի երկու խմբերի փոխադարձ պայմանագիրը արդէն քննւում է արդիւնաբերութեան և մանուֆակտուրայի դէպարտամէնտում կազմւած յանձնաժողովում։ Այժմ, ինչպէս լրագիրները հաղորդեցին, այդ պայմանագիրը վերջնականապէս մշակւած է։ Մենք աւելորդ չենք համարում այդ պայմանագրի գլխաւոր կէտերի հետ ծանօթացնել նաև մեր ընթերցողներին։

Խմբերից իւրաքանչիւրը իւր ներքին գործերի վերաբերեալ բոլոր կարգադրութիւնները անում է բոլորովին անկախ միւս խմբից։ Երկրորդ խմբի կարգադրիչները առանձին հաւատարմագրով յանձնարարում են պրն. Մանթաշեանին կատարել իրանց գործակալի պարտականութիւնները, կերոսինի արտահանութեան և նրա վաճառման վերաբերեալ բոլոր գործերը։ Երկու խմբերի գործակալները առանձին պայմանագրով սահմանում են իրանց փոխադարձ յարաբերութիւնները և որոշում վաճառման տեղերի սահմանները։ Գործակալների մէջ ծագած տարաձայնութիւնները վճռւում են երկու խմբերի կարգադրիչների ձայների մեծամասնութեամբ։ Վաճառքները արտասահմանում կատարւում են բոլոր կերոսինագործատէրերի հաշւին, այսինքն կերոսինագործատէրերից իւրաքանչիւրը արտասահմանեան վաճառքներում մաս ունի՝ համաձայն իւր մասնակցութեան չափի։ Այն պայմանագրերը, որոնցով ներկայ դաշնակցութեան մասնակցողները մինչև օրս կապալով վերցրած ունեն զանազան չոգենաւեր կերոսին արտահանելու համար, ունեն արտասահմանեան վաճառանոցներում կերոսինի պահեստներ, կամ վաճառած ունեն կերոսին, բայց դեռ չեն յանձնած—այդ բոլորը պէտք է կատարւեն ընդհանուրի հաշւին, սակայն առանց պատասխանատուութեան պայմագրողների կողմից՝ նախընթաց պարտազանցութեան համար։ Խմբերը փոխադարձաբար պատասխանատու են իրանց անդամների ու գործակալների կատարած զեղծումների համար։ Այն խումբը որի գործակալը կերոսին վաճառելիս կը խախտի պայմանագրի որ և է կէտը, պարտական է վճարել միւսին, իւրաքանչիւր խախտման համար 5000 ր. տուգանք։ Պայմանագրի ժամանակը որոշւած է մինչև 1899 թ. ապրիլի 1-ը, սակայն եթէ Նոբէլ ընկերութիւնը կամ Ռոտշիլդը այդ ժամանակամիջոցին հրաժարւեն առաջին խմբին մասնակցելուց, այդ դէպքում երկրորդ խումբը իրաւունք ունի ներկայ պայմանագիրը քանդւած համարել առանց դատաստանի և պատասխանատուութեան։ 1897 թվից սկսած իւրաքանչիւր խումբը իրաւունք ունի յունուարին յայտնել, իսկ ապրիլին իրան ազատ համարել այդ պայմանագրի պայմանները կատարելուց, սակայն պատասխանատու լինելով այն պայմանագրերի կատարման համար, որոնք կազմւած կը լինին մինչև խմբի յայտարարութիւնը։

Այդ հիմունքների վրայ՝ դաշնակցութիւնը ներկայ մարտ ամսից սկսում է իւր կերոսինի վաճառումը։ Ի դէպ է ասել, որ տարիքը 5 կոպ. պակասցրած է վեց ամիս ժամանակով։

Ծանօթութիւն Հեղինակի։